# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 11-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ, ԸՍՏ ԴՐԱՆՑ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ, ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40.1-րդ կետի, **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանել ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

2.Սույն որոշման իմաստով՝ առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը խախտող գործողությունները դիտարկվում են ցանկացած գործողություն, որը աղմուկ է առաջացնում և խանգարում է քաղաքացիների լիակատար հանգստությունը, ներառյալ անձնական գործողությունները, մեխանիկական միջոցների և տեխնիկական

միջոցների գործողությունները, այդ թվում՝ հրատեխնիկական արտադրանքի, ներառյալ հրավառության օգտագործումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| | | |
|---|---|---|
| Կողմ -16 | Դեմ -1 | Ձեռնպահ -1 |
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ | ԲԱԲԱՅԱՆ ԳԵՎՈՐԳ | ՕՍԵՅԱՆ ՋՈՀՐԱԲ |
| ԱՆՏՈՆՅԱՆ ՎԱՀԵ | | |
| ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇ | | |
| ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ | | |
| ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ | | |
| ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԱՐՄԱՆ | | |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ | | |
| ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ | | |
| ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ | | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆԻ | | |
| ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ | | |
| ՎԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ | | |
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ | | |
| ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ | | |

**Համայնքի ղեկավար** **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**